ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

___ նոյեմբերի 2022 թվականի №___-Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №748Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիա տրամադրելու մասին» №748Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ԼԷ №0633 լիցենզիայի պայմանների՝

1) 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) **Ինքնավար էներգաարտադրող՝** վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ սեփական կարիքների համար էլեկտրական էներգիա արտադրող սպառող, որը Երաշխավորված մատակարարի հետ կնքել է փոխհոսքերի պայմանագիր և տվյալ ինքնավար էներգաարտադրության տեղակայանքի մասով արտադրության լիցենզիա ունեցող անձ չէ: Սույն ենթակետի իմաստով՝ սեփական կարիք է համարվում ինքնավար էներգաարտադրողի, իսկ ինքնավար խմբի դեպքում՝ խմբի բոլոր մասնակիցների՝ էլեկտրական էներգիայի սպառումը, անկախ դրա օգտագործման նպատակից (կենցաղային, արտադրական և այլն),»,

2) №1 հավելվածի 1-ին կետից հանել «, որը ներառում է նաև հաղորդման ցանցում առաջացող էլեկտրական էներգիայի կորուստի արժեքը, եթե Առևտրային կանոններով այլ բան սահմանված չէ» բառերը և նույն կետում «հավելվածի համաձայն» բառերից հետո լրացնել «՝ հանելով Առևտրային կանոնների համաձայն էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցումից ձևավորվող գումարը» բառերը,

3) №1 հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Գնվող էլեկտրական էներգիայի արժեքը (ԳԷԱ) որոշվում է հետևյալ բանաձևով՝

ԳԷԱ = ԱԱ + ԻԱԱ + ՆԷԱ + ԾԱ - ՀԾՎԷ,

որտեղ՝

ԱԱ-ը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանցից գնվող էլեկտրական էներգիայի և շահագործման պատրաստականության վիճակում պահվող (պայմանագրային) հզորության արժեքն է (դրամ),

ԻԱԱ-ն Ինքնավար էներգաարտադրողների և Լիցենզավորված անձի միջև իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում Լիցենզավորված անձի կողմից Ինքնավար էներգաարտադրողներին տրամադրվող հատուցման արժեքն է (դրամ),

ՆԷԱ-ն իր սպառողներին վաճառելու նպատակով էլեկտրական էներգիա ներկրելու իրավունք ունեցող անձանցից գնվող և Լիցենզավորված անձի կողմից ներկրվող էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

ԾԱ-ն Լիցենզավորված անձին էլեկտրական էներգիայի հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, շուկայի օպերատորի, հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման և Շուկայի կանոններով նախատեսված այլ ծառայությունների մատուցման արժեքն է (դրամ),

ՀԾՎԷ-ն Առևտրային կանոնների համաձայն հաշվեկշռման ծառայության շրջանակում Լիցենզավորված անձի կողմից հաշվեկշռման ծառայություն մատուցող անձին վաճառվող էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ):

Սույն կետում նշված ԱԱ, ԻԱԱ, ՆԷԱ, ԾԱ և ՀԾՎԷ մեծությունները որոշվում են Առևտրային կանոնների պահանջներին համապատասխան Համակարգի օպերատորի կազմած և Հանձնաժողով ներկայացրած էլեկտրական էներգիայի

սպառման, արտահանման, ներկրման և արտադրության կանխատեսվող տարեկան հաշվեկշռի հիման վրա:»,

4) №1 հավելվածի 14-րդ կետում «խմբերն են» բառերը փոխարինել «խմբերն (գնորդներն) են» բառերով, «խմբի կողմից սպառված» բառերը՝ «խմբի (գնորդի) կողմից սպառված (գնված)» բառերով և «խմբին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինն է (դրամ/կՎտժ)» բառերը՝ «խմբին (գնորդին) վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինը կամ գինն է (դրամ/կՎտժ), ընդ որում էլեկտրաէներգետիկական ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող բաղադրիչում վաճառված էլեկտրական էներգիայի արժեքը գործարքի պայմանների վերլուծության արդյունքում կարող է հաշվարկվել էլեկտրական էներգիայի հաշվեկշռման առավելագույն սակագնով» բառերով,

5) №1 հավելվածի 15-րդ կետում «խմբի կողմից սպառված» բառերը փոխարինել «խմբի (գնորդի) կողմից սպառված (գնված)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
___ նոյեմբերի 2022թ.